



ՀՀ, Երևան 0010, Կառավարական 3-րդ մասնաշենք,
Հայաստան համահայկական հիմնադրամ
Հասարակութեան հետ կապերու բաժին
Հեռ: + (374 10) 521505

pr@himmadram.org
www.himmadram.org

Մամուլի հաղորդագրություն

Հիմնադրամը հրապարակեց 2008 թուականի Հայաստանի եւ Արցախի նուիրատուներու անուանացանկը

Երևան, 27 փետրուար, 2009թ.: «Հայաստան» համահայկական հիմնադրամը հրապարակեց 2008 թուականի Հայաստանի եւ Արցախի նուիրատուներու անուանացանկը: Ցանկը տպագրեց «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթը, ան զետեղուած է նաեւ Հիմնադրամի պաշտօնական կայքին մէջ՝ www.himmadram.org:

Հայաստանի բնակիչ նուիրատուներու թիւը 2008 թուականին աճած է հինգ անգամ: Նշուած աճը հնարաւոր դարձաւ դրամահաւաքի նոր եւ դիւրացած միջոցներու շնորհիւ, որոնք փափաքողներուն կարելիութիւնը ընձեռեցին, 2008 թուականի վերջին երեք ամիսներուն, իրենց առձեռն նուիրատուութիւնները կատարելու Հայ-Փօսթի տարբեր բաժիններուն միջոցաւ:

Այս առիթով «Հայաստան» համահայկական հիմնադրամը շնորհակալութիւն կը յայտնէ 2008 թուականին Ազգային նուիրատութեան դրամահաւաքի բոլոր մասնակիցներուն եւ կը վստահեցէ, որ նուիրատուութիւնները կը ծառայեն եւ պիտի ծառայեն հայրենիքի զարգացման եւ բարգաւաճման գործին:

«Տարիներու փորձը ցոյց կու տայ, որ Հայաստանի ներքին կարողականութիւնը մեծ է նուիրատուութիւններու զարգացման տեսակետէն: 2008 թուականի դրամահաւաքը կ'ապացուցէ այս իրողութիւնը».- նշեց Հիմնադրամի գործադիր տնօրէնի պաշտօնատար Արա Վարդանեանը եւ խօսքը շարունակելով ըսաւ. «10 դրամ նուիրած եւ 1000 դրամ նուիրած անձի անունը հաւասարապէս տեղ ունի մեր տարեկան ցանկին եւ «Ոսկէ մատեան» գիրքին մէջ, որովհետեւ Հիմնադրամին համար երկրորդական նուիրատուներ չկան: Մենք բոլոր առիթներով շնորհակալութիւն կը յայտնենք մեր բարեգործներուն, թե՛ անոնց, որոնց կը ճանաչանք, թե՛ ալ հազարաւոր հայրենասէր բարեգործներու, որոնց ճանչնալու պատիւը չունինք, իսկ մենք հաւասարապէս պատասխանատու ենք թե՛ առաջիններուն, թե՛ երկրորդներուն նկատմամբ»:

Երախտագիտութեամբ կը յիշատակենք անունները հովանաւորներուն, որոնք հնարաւոր դարձուցին՝ «Հեռուստամարաթօն 2008»-ն՝ գլխաւոր հովանաւոր՝ «ՎիվաՍԷԼ-ՄՏՍ», հովանաւորներ՝ «Արդշինինուեստպանք», «Ակբա-Կրեդիտ Ազրիկոլ պանք», «Հայ-Փօսթ», Եթերային հեռարձակման հովանաւոր՝ Հայաստանի պետական պատկերասփիւռի կայան:

«Հայաստան» համահայկական հիմնադրամը շահոյթ չհետապնդող կազմակերպութիւն է, որը հիմնադրուած է 1992թ-ին, որուն նպատակն է խթանել մարդասիրական գործունէութիւնը եւ տարբեր հաստատութիւններու եւ կառոյցներու մասնաճիւղերու զարգացումը ՀՀ-եան եւ ԼՂՀ-եան մէջ: Հիմնադրամը ունի 15 տեղական մարմին ամբողջ աշխարհի մէջ: